ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ
Ժամանակակից պատերազմներում և զինված հակամարտություններում ահաբեկչական գործոնի ակտիվացման պատճառներն ու հիմնական միտումները

ՄԱՐԳԱՐԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Բրյուսովի պետական համալսարան

Գիտության և տեխնոլոգիաների ոլորտում իրականացվող հեղափոխական փոփոխությունները անդառնալիորեն կերպափոխել են ժամանակակից պատերազմների և զինված հակամարտությունների բնույթը: Փոփոխվող իրադրությունն ու պայմաններն էլ անխուսափելիորեն և ուղիղ կերպով ազդել են պատերազմի ու պատերազմավարության ձևերի, մասշտաբների, շարժառիթների վրա: Ժամանակակից պատերազմներին և զինված հակամարտություններին բնորոշ «հիբրիդայնացման» հետևանքներից մեկը ահաբեկչական կամ դիվերսիոն-ահաբեկչական խմբավորումների ակտիվացումն ու ներգրավվումն է ռազմական գործողություններում պայքարի ոչ ավանդական, անհամաչափ միջոցների կիրառմամբ: Հոդվածում քննարկվում են ժամանակակից պատերազմներում և զինված հակամարտություններում ահաբեկչական գործոնի ակտիվացման պատճառներն ու հիմնական միտումները՝ խնդիրը դիտարկելով ադրբեջանաթուրքական ագրեսիայի հետևանքով Արցախում սանձազերծված պատերազմում վարձկան ահաբեկիչների ներգրավման համատեքստում:

Բանալի բառեր
Ժամանակակից պատերազմներ, զինված հակամարտություն, ահաբեկչություն, վարձկաններ, միջազգային մարդասիրական իրավունք, Արցախյան հակամարտություն:

Նախաբան

Պատերազմի բնույթի ու դրա փոփոխության վրա անմիջական ազդեցություն են ունենում կոնկրետ ժամանակաշրջանի առանձնահատկությունները, պատերազմում օգտագործվող միջոցները, տնտեսության և տեխնոլոգիաների զարգացման մակարդակը և

այլն: Այդ փոփոխությունները և՛ որակական են, և՛ քանակական ու ակնառու են հատկապես մի շարք ասպեկտներում՝ պատերազմավարության ձևեր, նոր սպառազինության փորձարկում, պայքարի անհամաչափ ձևերի կիրառում, ոչ պետական զինված ուժերի ներգրավում ռազմական գործողություններում, նորագույն տեխնոլոգիաների և արհեստական բանականության կիրառում, ռազմական գործողությունների կործանարար բնույթ, նպատակների վճռականություն, լարվածության բարձր մակարդակ, ռազմական գործողությունների վարման ձևերի և միջոցների հաճախակի, հաջորդական և համաժամանակյա փոփոխություն և այլն: Փոփոխությունների ծավալի և որակի մասին պատկերացում են տալիս արդեն իսկ վերջին շրջանում շրջանառության մեջ մտած մի շարք եզրույթներ, ինչպիսիք են «նոր սերնդի պատերազմներ[1]», «կիբեռ-պատերազմներ[2]», «անհամաչափ պատերազմներ[3]», «հիբրիդային պատերազմներ[4]», «տեղեկատվական պատերազմներ[5]», «անշփում պատերազմներ[6]», «սուրոգատ պատերազմներ[7]» և այլն: Այս պատերազմները սահմանափակված չեն ժամանակի և տարածության մեջ, անորոշ է մասնակիցների թիվը և կարգավիճակը (ոչ պետական զինված ուժեր՝ վարձկաններ, վարձկան-ահաբեկիչներ, ահաբեկիչներ և այլն), դրանք վարվում են բոլոր հնարավոր միջոցներով և մակարդակներում (ռազմավարական,

---

[1] **Պետրոսյան Մ.,** Պատերազմի սերունդներ. Պատերազմի զարգացումը արդի փուլում, *Հայկական բանակ,* 1, 9-21.

[2] **Harrison H.,** Cyber warfare and the laws of war, Cambridge, UK, Cambridge University Press, 2014.

[3] **Schroefl J., Kaufman S.,** Hybrid actors, tactical variety: rethinking asymmetric and hybrid war, Studies in Conflict & Terrorism, 2014, Vol. 37, Iss. 10, pp. 862–880.

[4] **Hoffman F.,** Conflict in the 21st Century: The Rise of Hybrid Wars. Arlington, VA: Potomac Institute for Policy Studies, 2007.

[5] **Bishop M., Goldman E.,** The Strategy and Tactics of Information Warfare, 2003, *Contemporary Security Policy*, **24,** 1, 113-139

[6] **Slipchenko V.,** Voina novogo pokoleniia: Distantsionnye i beskontaktaktnye, Moscow: OLMA-Press, 2004; Slipchenko V., Beskontaktnye voiny. Moscow: Izdatel'skii dom: Gran-Press, 2001

[7] **Andreas Krieg, Jean Marc Rickli**, Surrogate warfare: the art of war in the 21st century?, *Defence Studies*, 2018, pp. 1-18.

օպերատիվ, մարտավարական) ու անմիջական և ուղիղ ազդեցություն են ունենում հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա: Ժամանակակից պատերազմների բնույթը թույլ է տալիս համադրել և համաժամանակյա կիրառություն ապահովել զինված պայքարի տարբեր ձևերի, մարտավարությունների և հնարքների համար՝ ապահովելով բարձր արդյունավետություն և սիներգետիկ ազդեցություն ու հետևանքներ:

Պատերազմի հնարավոր բնույթի վերաբերյալ պաշտոնական տեսակետներով ձևավորվում է ընդհանուր պատկերացում, թե ո՞ր հակառակորդի հետ և ո՞ր պատերազմին է պետք պատրաստվել, ինչպիսի՞ խնդիրներ են լուծելու զինված ուժերը, այլ զորքերն ու մարմինները, ի՞նչ լարվածություն կպահանջի պատերազմը ժողովրդից, ապագա պատերազմի ի՞նչ հնարավոր հետևանքներ է պետք կանխատեսել, ի՞նչ է հարկավոր անել պետության անվտանգության և պաշտպանության ապահովման համար, ինչպե՞ս իրականացնել ԶՈՒ-ի, մյուս զորքերի և մարմինների զարգացումը՝ առկա մարտահրավերներին առավել պատրաստված ու համարժեք կերպով դիմակայելու համար:

Պատերազմների բնույթի փոփոխության ուսումնասիրության անհրաժեշտությունն առավել քան արդիական է դարձել վերջին շրջանում Միջին Արևելքում, Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, Աֆրիկայում, Հարավային Ամերիկայում, Հարավային Կովկասում տեղի ունեցած իրադարձություններից հետո:

Ժամանանակից պատերազմների բնույթի փոփոխության վրա ազդող գործոնները բազմաթիվ են ու համընդգրկուն՝ գերճշգրիտ զենքի, օդատիեզերական ուժերի, ԱԹՍ-ի կիրառում, հետախուզության միջոցների զարգացում, արհեստական բանականության, ինքնավար սարքերի (օրինակ, ինքնավար մեքենաներ) և այլ նորագույն տեխնոլոգիաների (օրինակ, էկզոկմախք) կիրառություն զինված ուժերում, պայքարի անհամաչափ և հիբրիդային ձևերի, դիվանագիտական, տեղեկատվական, հոգեբանական, տնտեսական ճնշման լծակների կիրառություն,

լայնածավալ օդատիեզերական և ցամաքային գործողությունների և օպերացիաների իրականացում, համապարփակ և ընդգրկուն հետախուզություն, «հստակ» առաջնագծի բացակայություն, հակառակորդի ենթակառուցվածքների, քաղաքացիական բնակչության և տնտեսության խոցում, ազդեցություն մարդկային կյանքի բոլոր ոլորտների վրա և այլն:

Պատերազմների և զինված հակամարտությունների փոփոխվող բնույթը չափազանց մեծ ներդրումներ է պահանջում կիբեռսպառազինության, նորագույն տեխնոլոգիաների բնագավառում, իսկ փոփոխությունների հիմնական պատճառները նոր դերակատարներն են, զարգացումները, իրավիճակները, տեխնոլոգիաները և այլն: Նորագույն տեխնոլոգիաների և հատկապես արհեստական բանականության միջոցով կառավարվող համակարգերը կարող են շրջադարձային փոփոխություններ բերել և վերացնել թերությունները ռազմավարական մակարդակում որոշումների կայացման գործընթացում «պատերազմի մշուշի» (fog of war) պայմաններում, մասնավորապես, ռիսկերի ճիշտ գնահատում, խուսափում չարդարացված ու չկշռադատված ծախսերից, ճանաչողական էվրիստիկա և այլն[8]:

Պատերազմի հնարավոր բնույթի ավելի ճիշտ որոշման (կանխատեսման) նպատակով անհրաժեշտ է լավ տիրապետել համապատասխան հետազոտման մեթոդաբանությանը, հաշվի առնել, որ զարգացման այս կամ այն միտումների կանխատեսման վրա հիմնված եզրակացությունները (հանձնարարականները) կարող են լինել համեմատաբար ճշգրիտ միայն որոշակի ժամանակահատվածի և սահմանափակ հեռանկարի համար: Ուստի, կարիք կա մշտապես ճշգրտելու առկա ծրագրերը, նկատի ունենալ ռազմաքաղաքական և ռազմավարական իրադրության փոփոխությունները ու զարգացման միտումները:

20-րդ դարի վերջին և 21-րդ առաջին երկու տասնամյակներում գրանցված ռազմական հակամարտությունների վերլուծությունը

[8] **Johnson J.**, Artificial Intelligence and Future Warfare: Implications for International Security, *Defense & Security Analysis*, 2019, 1, 147-169.

հնարավորություն է տալիս առանձնացնել ժամանակակից պատերազմների և զինված հակամարտություններին բնորոշ մի շարք միտումներ՝

- Միջազգայնացված քաղաքացիական պատերազմների թվի, համամասնության և զոհերի թվի աճ (ներքին հակամարտութուններ արտաքին միջամտությամբ):
- Նոր դերակատարների (պետությունների կամ դաշինքների) ներգրավումը ռազմական գործողություններում (շատ հաճախ ավելի մեծ ռազմաքաղաքական ներուժ ունեցող) նպաստում է հակամարտության անհամաչափ և հիբրիդային բնույթի ուժգնացմանը:

Ժամանակակից փուլում ռազմական գործողությունների ակտիվ մասնակիցներ են ահաբեկչական և պարտիզանական խմբավորումները, որոնք ահաբեկչական գործողությունները դիտարկում են որպես զինված պայքարի հիմնական միջոց (այդ թվում նաև ռազմական գործողությունների թատերաբեմից դուրս)[9]:

Ահաբեկչական գործոնի ակտիվացումը: Ժամանակակից պատերազմներն ու զինված հակամարտությունները բարդ ու ոչ գծային համակարգեր են, որոնք չեն ենթարկվում պատերազմավարության դասական կանոններին, չափազանց անկանխատեսելի են դրանց ելքերը, միտումները կարող են փոփոխվել երկրաչափական պրոգրեսիայով: Ժամանակակից պատերազմների «հիբրիդայնացումը» էապես ջնջել է պատերազմի և խաղաղության միջև սահմանը և «հիբրիդայնացման» հետևանքներից մեկն էլ, ինքնին, ահաբեկչական կամ դիվերսիոն-ահաբեկչական խմբավորումների ներգրավումն է ռազմական գործողություններում, ինչը լրջագույն սպառնալիք կարող է հանդիսանալ ոչ միայն պետական (կանոնավոր) զինված ուժերի, այլ նաև խաղաղ բնակչության համար:

---

[9] **Степанова Е,.** Основные направления трансформации вооруженного насилия в современных конфликтах (начало XXI века), https://www.imemo.ru/files/File/ru/events/2019/23102019/23102019-TEZ-S-001.pdf, (12.09.2021)

Ժամանակակից ահաբեկչությունը կազմակերպված բռնության իրականացում է, որի նպատակը պետությանն ու վարչակարգին վրա քաղաքական կամքի պարտադրումն է ահաբեկչության ճանապարհով[10]: Ահաբեկչությունը միշտ եղել է անհնազանդության (անօրինական զինված կազմավորումների գործողություններ) անբաժան մարտավարությունը, որն իր մեջ ներառում է ահաբեկչություն, պարտիզանական պատերազմ, զանգվածային բողոքներ կամ դրանց ցանկացած համակցություն, որը որոշվում է ոչ կանոնավոր (irregulars) տեղային, ռազմավարական, մարտավարական, տնտեսական պայմաններով, այլ ոչ թե նրանց ռազմավարական պատկերացումներով[11]:

Վերջին երկու տասնամյակների տեղային պատերազմների և զինված հակամարտությունների փորձը ցույց է տալիս, որ կոնվենցիոնալ (ավանդական) մարտավարությունները արդյունավետ չեն ոչ ավանդական (անհամաչափ) սպառնալիքների դեմ: Ռազմական գործողություններում վարձկանների, ահաբեկիչների կամ առհասարակ ոչ կանոնավոր զինված կազմավորումների ներգրավումը տարբեր պետությունների կողմից պայմանավորված է մի շարք առանցքային գործոններով: Նախ հնարավոր է ապահովել մարդկային ռեսուրսների համալրման անընդմեջ, շարունակական գործընթաց, ինչը ենթադրում է նաև ոչ մեծ ուշադրություն կորուստների նկատմամբ (հետևաբար զոհերի թվի պատճառով դժգոհությունների բացակայություն սեփական հասարակության կողմից:

Ապակենտրոնացման գաղափարի կիրառումն ահաբեկիչներին, վարձկաններին հնարավորություն է տալիս աշխատել բարձր տեմպով՝ անհամեմատելի առավելություն ձեռք բերելով կանոնավոր ստորաբաժանումների նկատմամբ: Ահաբեկիչների մարտավարությունը հարձակողական է նույնիսկ պաշտպանո-

[10] **Ackerman G., Burnham M.,** Towards a Definition of Terrorist Ideology, *Terrorism and Political Violence*, 2019, 1, 1-31.

[11] **Merari A.,** Terrorism as a Strategy of Insurgency, *Terrorism and Political Violence*, 5, 1993, 213-251.

ղական գործողությունների ժամանակ: Տարբեր զինատեսակների օգտագործելու ճկունությունը (հակառակորդների զինատեսակների իմացություն և կիրառության հմտություններ): Նոր պայմաններին արագ հարմարվողականությունը, յուրաքանչյուր պահին նոր մարտավարության կիրառում հնարավորություն է տալիս հանկարծակիի բերել հակառակորդին, կիրառել հարձակման տարբեր մարտավարություններ: Նրանք գործում են տարաշարժային (մանյովրային) պատերազմի սկզբունքներով՝ հիմնական շեշտը դնելով շարժուն (mobile) խմբերի գործունեության վրա: Նման խմբերի հայտնաբերումը և ոչնչացումը բավական բարդ է նույնիսկ նոր գերճշգրիտ ու հեռահար զինատեսակների կիրառման պարագայում: Շարժուն խմբերն առավել կենսունակ են և կարողանում են արդյունավետ գործել՝ իրականացնելով անսպասելի գրոհներ, խաբեություն ու խորամանկություն միջոցով: Նրանց առջև դիրքերը պահելու խնդիր դրված չէ, իսկ պաշտպանությունը «ցրված է», ինչը խանգարում է հստակ որոշել ճակատի, թևերի կամ թիկունքի տեղը:

Ահաբեկչական խմբավորումները հեշտությամբ կարող են ներթափանցել հակառակորդի ռազմավարական խորքը, իրականացնել պայթյուններ, վնասել հակառակորդի ենթակառուցվածները, հաղորդակցության ուղիները, ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտները (օդանավակայան, գազամուղ, նավթամուղ, ատոմակայան և այլն): Նպատակը հակառակորդի բարոյալքումն է և դիմադրության դադարեցումը: Այդ գործողությունները կարող են խուճապ առաջացնել հասարակության շրջանում՝ ունենալով ավելի շատ հոգեբանական հետևանքներ: Այսինքն ռազմական գործողությունների ընթացքի ու ելքի վրա ազդում են ոչ այնքան ահաբեկիչների գործողությունները մարտադաշտում, որքան հոգեբանական ազդեցությունը, վախի սերմանումը հակառակորդի հասարակության շրջանում: Վերջինս ևս մեկ անգամ փաստվեց Արցախյան Երկրորդ պատերազմի ժամանակ:

Ահաբեկիչների և վարձկանների ներգրավմամբ զինված հակամարտությունները բնորոշվում են նաև կողմերի ռազմական գործողությունների ցածր ինտենսիվությամբ, կարող են ունենալ լայն ժամանակային ընդգրկում, ինչպես նաև ընթանալ կարճաժամկետ և երկարաժամկետ դադարներով: Օրինակ, 1979-1989 թթ. Աֆղանական պատերազմը մի կողմից խորհրդային զորքերի և աֆղանական կառավարական ուժերի, իսկ մյուս կողմից մոջահեդների կազմավորումների միջև:

Ռազմական գործողությունների ժամանակ ահաբեկիչների ներգրավումը նաև շահավետ է, քանի որ ահաբեկիչներին հավաքագրելու և այդ գործողություններում օգտագործելու համար ավելի քիչ ծախսեր են պահանջվում, քան կանոնավոր պետական զինված ուժերի դեպքում:

Նորագույն տեխնոլոգիաները ընդլայնել են ահաբեկիչների գործունեության շրջանակը՝ մեծացնելով քաղաքացիական բնակչությանը սպառնացող վտանգները: Համացանցը ահաբեկիչներին հնարավորություն է տվել[12] ավելի արդյունավետ կերպով կազմակերպել և իրագործել ահաբեկչական ակտեր, կայքերի և վիդեո խաղերի միջոցով տարածել ծայրահեղական գաղափարներ, հավաքագրել մարդկանց և այլն: Ահաբեկչության տարածման գործում կարևոր նշանակություն ունեն երկու գործոններ՝ հավանական ահաբեկիչների հետ ուղիղ կապ հաստատելու հնարավորությունը և բարձր տեխնոլոգիաների մատչելիությունն ու հասանելիությունը: Ինտերնետի միջոցով տարածվող տեսանյութերը «ժողովրդավարացնում» են ծայրահեղականության տարածումն ու քարոզը՝ նպաստելով նմանատիպ դրսևորումների թվի աճին ոչ միայն Միջին Արևելքում և Աֆրիկայում, այլ նաև ամբողջ աշխարհում: Անօդաչու թռչող սարքերի, ինքնավար տրանսպորտային միջոցների, հեռահար խոցման զինատեսակների,

[12] **Conway M.,** Terrorism and the Internet: New Media—New Threat?, *Parliamentary Affairs*, 2006, **59**, 2, 283–298.

արհեստական բանականության կիրառումը[13] ահաբեկիչների կողմից ավելի ու ավելի հաճախակի երևույթ է դարձել և էականորեն բարդացրել է ահաբեկչության դեմ պայքարը։

Նորագույն տեխնոլոգիաներն ահաբեկիչներին թույլ են տալիս հաղթահարել աշխարհագրական և ժողովրդագրական խոչընդոտները, կապ հաստատել գաղափարակիցների հետ համացանցի և սոցիալական ցանցերի միջոցով։ Այս սխեմայով են աշխատում Իսլամական պետությունը, Բոկո Հարամը, Ալ Քաիդան և այլն։ Բարձր տեխնոլոգիաները ստեղծել են սովորական ու ոչ ավանդական ահաբեկչական վտանգների նոր հնարավորություններ, մասնավորապես, բավական երկար քննարկվում էին Իսլամական պետության կողմից ստեղծված գաղտնի լաբորատորիաների մասին լուրերը, որտեղ ահաբեկիչների կողմից մշակվում էին հրթիռներ՝ ռազմական և քաղաքացիական ինքնաթիռներ խոցելու համար, ինչպես նաև իրականացվում էին ինքնավար ավտոմեքենաները ահաբեկչական նպատակներով օգտագործելուն նպատակաուղղված ծրագրեր։

Համացանցն ակաբեկիչներն օգտագործում են ընկալման ձևավորման, հավաքագրման ու մոբիլիզացման, ֆոնդահայթայթման, տվյալների հավաքագրման, կիբերհարձակումների, ծրագրային ապահովման տարածման (բջջային հավելվածներ, խաղեր), կեղծ փաստաթղթերի տարածման, կադրերի պատրաստման նպատակով։ Ընդ որում, «կիբեռ» զենքերը երբեմն կարող են ավելի մեծ ազդեցություն ունենալ, քան ֆիզիկական սպառնալիքն ու ոչնչացումը։

Տարբեր ահաբեկչական խմբավորումներին անդամակցության պատճառները բազմաթիվ են, ինչպես որ տարբեր են այդ խմբերի կազմերում ներգրավվածների կռվելու դրդապատճառները։ Այնուամենայնիվ, այդ խմբավորումներն ամբողջ աշխարհում օգտագործում են հավաքագրման մի քանի փորձված մեխանիզմներ և ռազմավարություններ։ Հավաքագրման որոշ մեխանիզմների

[13] **Ganor B.,** Artificial or Human: A New Era of Counterterrorism Intelligence?, *Studies in Conflict & Terrorism,* 2019, Vol. 44, Issue 7, pp. 1-21.

միջոցով փորձ է արվում հուզական կամ ռացիոնալ իշխանություն ձեռք բերել հավանական թեկնածու-վարձկանների վրա (շարժառիթները տարբեր են՝ վարձատրություն, զբաղվածություն, կեցության խնդիրների լուծում, կրթություն): Հաճախ կիրառվում է նաև երեխաներին վաղ տարիքում հավաքագրելու մեթոդը. այս պարագայում հուզական կապն ավելի ուժեղ է, քանզի այդ խմբերը, որոնցում նրանք ներգրավվում են, դառնում են նրանց դե ֆակտո ընտանիքը: Ինչ վերաբերում է սպառազինությանը, ապա դրա ձեռք բերման աղբյուրները ևս տարբեր են՝ պետական զինված ուժերի պահեստներ, մրցակից խմբեր, ինքնաշեն զենքեր, այլ ահաբեկչական խմբեր, «հովանավոր» պետություններ (սովորաբար այդ պետությունները պաշտոնապես հակամարտության մեջ ներգրավված չեն), միջնորդավորված գնում տարբեր երկրներից, համագործակցություն տարբեր անդրազգային հանցավոր խմբերի հետ (թմրանյութերի վաճառք, թրաֆիքինգ) և այլն: Կառավարումը նման խմբերում իրականացվում է հիերարխիկ ձևով, իսկ ցանցային համակարգը հնարավորություն է ընձեռում ապահովել ճկունության բարձր մակարդակ, որտեղ յուրաքանչյուր ենթախումբ կարող է կիրառել իրավիճակից բխող մարտավարություն[14]:

Այսպիսով, տարբեր պետությունների կողմից ահաբեկիչների ներգրավումը պայմանավորված է մի շարք պատճառներով՝

- Բավարար չափով ֆինանսական միջոցների առկայություն:
- Պետական զինված ուժերի վրա կատարվող ֆինանսական ծախսերը մի քանի անգամ գերազանցում են ոչ կանոնավոր խմբավորումների համար նախատեսված ծախսերը:
- Նման խմբավորումները անվերահսկելի են և անհամաչափ/ցանցային գործողությունների միջոցով կարողանում են պայքարել կանոնավոր զինված ուժերի դեմ:
- Նման խմբավորումները տիրապետում են ժամանակակից սպառազինությանը, քանի որ, շատ հաճախ, նախապես հատուկ

[14] **Nadin P., Cammaert P., Popovski V.,** Armed Groups in Modern Warfare, *Adelphi Series*, 2014, **54**, 449, 17-36.

պատրաստություն են անցնում ճամբարներում և գործում են թիրախային:

Միջազգային ահաբեկչության պատճառով առաջացող խնդիրները հիմնականում վերաբերում են երկու ուղղությունների՝

- պետություններն և պետությունների դաշինքները ներքաշվում են լայնածավալ ռազմական գործողությունների մեջ (օրինակ՝ 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի գործողությունները՝ Աֆղանստանում):
- ոչ պետական կազմավորումները, ինչպիսին, օրինակ, Իսլամական պետությունն է, ազդելում են տարածաշրջանային և միջազգային գործընթացների վրա՝ պատերազմի մեջ ներքաշելով մի շարք պետությունների:

Ահաբեկչությունը որպես ժամանակակից պատերազմների և զինված հակամարտությունների դրսևորման յուրահատուկ ձև դիտարկելը հնարավորություն է տալիս առանձնացնել երեք հիմնական ուղղություններ՝ քաղաքակրթական, ռազմական-քաղաքական և տեղեկատվական-հաղորդակցային: Քաղաքակրթական ուղղությանն են վերաբերում բոլոր այն հայեցակարգերը, որոնք բնորոշում են ահաբեկչությունը որպես տարբեր ուժերի, քաղաքակրթությունների, մշակույթների և ուժերի առճատակում[15] (կարող են գործել ինչպես ակնհայտ, այնպես էլ գաղտնի):

Ռազմական-քաղաքական ուղղության ներկայացուցիչները դիտարկում են խնդիրը ահաբեկչական պատերազմի համատեքստում, այլ կերպ՝ որպես «փոքր պատերազմներ», որոնց նպատակը հակառակորդ պետության ապակայունացումն է՝ առանց պատերազմական իրավիճակի անցնելու: Վ. Սլիփչենկոն 2001թ. սեպտեմբերի 11-ի ողբերգությունը համարում է նոր, անհամաչափ (asymmetric warfare) պատերազմի սկիզբ՝ որպես արձագանք պատերազմին, և հեղափոխություն ռազմական գործում[16]: Ըստ նրա, դա անշփում պատերազմ է և ձևավորվել է

---

[15] **Гоголицын Ю.,** Спонсоры джихада, Москва, 2003, сс. 19-20.

[16] **Слипченко В.,** Войны шестого поколения. Оружие и военное искусство будущего, Москва, 2002, с. 45.

որպես արձագանք գլոբալացմանը: Նման պատերազմի իմաստը կոորդինացված ոչ ռազմական հարվածներ հասցնելը և հանկարծակի ճնշող արդյունքի ստացումն է՝ անընդունելի վնաս հասցնելու ճանապարհով: Տեղեկատվական-հաղորդակցային ուղղությունը ներառում է հայեցակարգեր, որոնք ներկայացնում են ահաբեկչությունը որպես տեղեկատվական պատերազմի տարատեսակ:

Հատկանշական է, որ ահաբեկչական կազմակերպությունների ձևավորումը, գործունեությունն ու ահաբեկիչների ներգրավումը ռազմական գործողություններում առավել հաճախ հանդիպում են ձախողված պետություններում: Դրա մասին են վկայում նաև «Ձախողված պետությունների ինդեքսի» ամենամյա զեկույցները, որում որպես այդպիսի պետություններ նշվում են Եմենը, Սիրիան, Կոնգոյի Դեմոկրատական հանրապետությունը, Աֆղանսատանը, Իրաքը, Հարավային Սուդանը, Սոմալին և այլն[17]: Այդ պետություններում առկա է նման կազմակերպությունների ստեղծման և/կամ գործունեության համար նպաստավոր միջավայր, միաժամանակ, հենց ահաբեկչությունն էլ նպաստում է, որ պետությունը դառնա ձախողված: Սա փոխպայմանավորող գործընթաց է, անվերջանալի շղթա, որը կարող է ավարտվել և/կամ կրճատվել ահաբեկչության դեմ մղվող ակտիվ և արդյունավետ պայքարով, ինչն էլ, իր հերթին, կնպաստի պետության կայացման բարդ ու բազմավեկտոր գործընթացի հաջողությունը:

Աշխարհում գոյություն ունեցող հակամարտային գոտիները ահաբեկչության և ահաբեկչական տարատեսակ գործողությունների հիմնական ասպարեզներն են: Այս մասին են վկայում նաև «Ահաբեկչության համաշխարհային ինդեքսի» տվյալները: Միայն 2018թ. ահաբեկչության հետևանքով զոհերի 95%-ը գրանցվել է այն պետություններում, որտեղ արդեն իսկ առկա են եղել հակամարտություններ և բոլոր այն 10 պետությունները, որոնք ավելի շատ են տուժել ահաբեկչությունից, ներգրավված են եղել

[17] Fragile States Index, https://fragilestatesindex.org/

զինված հակամարտության մեջ, այդ թվում՝ Սիրիա, Աֆղանստան, Իրաք, Նիգերիա, Պակիստան, Սոմալի, Հնդկաստան, Եմեն, Ֆիլիպիններ և Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն:
Վերջին տասնամյակի ընթացքում թե՛ հակամարտությունների մակարդակը, թե՛ ահաբեկչության ազդեցությունն ամբողջ աշխարհում զգալիորեն աճել են: 2014թ. ռազմական գործողությունների արդյունքում զոհերի թիվն ամենամեծն է եղել նախորդ 25 տարիների ընթացքում, իսկ ահաբեկչության հետևանքով զոհվածների թիվն ամենամեծն է եղել 1998թ. հետո: 2020թ. տվյալներով այդ թիվը նվազել է 59 %-ով և կազմել է 13,826[18]:
Տնտեսագիտության և խաղաղության ինստիտուտի ուսում-նասիրությունները փաստում են, որ և՛ ռազմական գործողությունների, և՛ ահաբեկչության հետևանքով գրանցված զոհերի թիվը, որպես կանոն, աճում է համարժեքորեն: Ընդհանուր առմամբ, այն պետությունները, որտեղ մեծ է ահաբեկչության մակարդակը, վաղ թե ուշ բախվում են ներքին զինված հակամարտությունների առաջացման վտանգի հետ: Միևնույն ժամանակ, ահաբեկչության ավելի մեծ ինտենսիվությունը մեծամասամբ կապված է երկարաժամկետ կամ կարճաժամկետ զինված հակամարտությունների հետ:

Զինված հակամարտությունների ընթացքում ահաբեկիչների ներգրավումը կամ ահաբեկչական գործողությունների իրակա-նացումը մի քանի անգամ մեծացնում է զոհվածների թիվը[19]: Օրինակ, Իրաքի դեպքը, որտեղ պետական (Իրաք) և միջազգային կոալիցիայի զինված ուժերը[20] (ԱՄՆ-ի գլխավորությամբ) 2001թ. սկսած պայքարում էին ցանցային ահաբեկչական խմբա-

[18] Global Terrorism Index 2020, Measuring the Impact of Terrorism, https://www.visionofhumanity.org/wp-content/uploads/2020/11/GTI-2020-web-1.pdf, (15.09.2021)
[19] Global Terrorism Index 2020, Measuring the Impact of Terrorism, https://www.visionofhumanity.org/wp-content/uploads/2020/11/GTI-2020-web-1.pdf, (15.09.2021)
[20] **Wanandi J.,** A Global Coalition against International Terrorism, *International Security*, **26**, 4, 2002, 184-189

վորումների դեմ՝ Ալ-Քաիդա, Թալիբան և 2015 թ. սկսած նաև Իսլամական պետություն:

Ահաբեկչության դեմ պայքարի ձևերը, մասշտաբներն ու մեխանիզմերն էական փոփոխությունների ենթարկվեցին 2001թ. սեպտեմբերին ԱՄՆ-ում իրականացված ահաբեկչական գործողություններից հետո, ԱՄՆ-ում և եվրոպական մի շարք երկրներում մշակվեցին ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք փաստաթղթեր, որոնք միտված էին փոխել ահաբեկչության դեմ պայքարի ռազմավարության տրամաբանությունը, ավելի համակարգված, անհետաձգելի և հզոր հարված հասցնել ահաբեկչական տարբեր խմբավորումներին:

2000-ականներին նոր աշխարհակարգի ձևավորման մրցակցության սրման և դրա հետևանքով ազդեցիկ պետությունների մոտեցումների փոփոխությունների արդյունքում ահաբեկչությունն ու դրա դեմ պայքարի դրսևորումները ևս փոխվել են. որոշ պետություններ ահաբեկչական խմբավորումները ներգրավում են այդ մրցակցությունում, իսկ հակամարտություններում, ռազմական բախումներում արդեն մետրոպոլիաներն են սկսել օգտագործել այդ խմբավորումները (օրինակ Ադրբեջանը Արցախյան Երկրորդ պատերազմում):

Ահաբեկիչների և վարձկանների ներգրավման խնդիրները միջազգային իրավունքի համատեքստում: Ահաբեկչությունը շատ հաճախ է ասոցացվում զինված հակամարտության հետ: Իսլամական պետությունը և Սիրիայում ու Իրաքում այդ ահաբեկչական կազմակերպության ներգրավումը ռազմական գործողություններում, որոշ տարածքների վրա վերահսկողության հաստատումը, թերևս, ամենավառ օրինակներից մեկն է: Ահաբեկչությունը զինված հակամարտությունների համատեքստում քննարկելու համար պետք է անցում կատարել միջազգային մարդասիրական իրավունքի կարգավորման դաշտ: Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո ընդունվեցին Ժնևյան կոնվենցիաները պատերազմների վարումը կանոնակարգելու և պատերազմի հետևանքով քաղաքացիական անձանց

տառապանքները հնարավորինս մեղմելու նպատակով։ Բոլոր այդ կոնվենցիաները և լրացուցիչ արձանագրությունները նպատակ ունեին «լեգիտիմացնել» պատերազմի վարումն ու դրա կանոնները և ուժի մեջ են մտնում զինված հակամարտության պարագայում[21]։

Հակամարտային գոտիներում վարձկանների և ահաբեկչական տարբեր խմբերի ներգրավումը ռազմական գործողություններում բազմաթիվ հարցեր է առաջացրել դրանց քրեական հետապնդման իրավական հիմքերի վերաբերյալ։ Կարևոր են նաև անդրազգային տարրեր պարունակող ահաբեկչական հանցագործությունների հետ կապված հարցերը, որոնք կարող են վերաբերել ահաբեկիչների քաղաքացիությանը, համագործակցությանն այլ պետությունների հետ (ահաբեկիչների հավաքագրում, պատրաստում, տեղափոխում 3-րդ երկրի տարածք), արտահանձնմանը, փոխադարձ իրավական աջակցությանը և այլն։ Զինված հակամարտություններում ահաբեկիչների ներգրավման իրավական ընթացակարգերը կապված են Միջազգային մարդասիրական իրավունքի[22] համաձայն քրեական պատասխանատվության նորմերի և ՄԱԿ-ի հակաահաբեկչական հռչակագրերի[23] հետ։

Ոչ պետական զինված խմբավորումների, ահաբեկչական տարբեր կազմակերպությունների թվի մեծացումը լուրջ մարտահրավեր է միջազգային իրավունքի համար։ Ահաբեկչական տարբեր խմբավորումների անդամների կողմից կիրառվող միջոցները, ինտենսիվ բռնությունը, նրանց կազմակերպվածության մակարդակը, նրանց կողմից որոշակի վերահսկողությունը այս կամ այն տարածքի վրա, ինչպես, օրինակ, Իրաքում, Սիրիայում, Ֆիլիպիններում, հստակորեն ազդել է հակամարտության տևողության, ինչպես նաև նոր հակամարտային օջախների

[21] **Zuijdewijn J.,** Peace, Terrorism, Armed Conflict and War Crimes, Security and Human Rights, Vol. 26, Issue 2-4, pp. 207-223.

[22] International Humanitarian Law, https://ijrcenter.org/international-humanitarian-law/ , (17.09.2021)

[23] United Nations Conventions on Terrorism, https://treaties.un.org/Pages/DB.aspx?path=DB/studies/page2_en.xml&menu=MTDSG, (17.09.2021)

առաջացման վտանգը: Այս առումով առկա են նաև իրավական որոշակի խնդիրներ, քանի որ հակաահաբեկչական կոնվենցիաներն ու արձանագրությունները չեն կարող կիրառվել զինված հակամարտությունների ժամանակ և դա ամբողջապես գտնվում է Միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում: Միջազգային մարդասիրական իրավունքը սահմանում է այսպես կոչված պատերազմի իրավունքը (jus in bello) և վարքականոնները, որոնք թույլատրելի են պատերազմի ժամանակ: Այն ներառում է Ժնևյան կոնվենցիաները, Հաագայի կոնվենցիաները, ինչպես նաև հաջորդող պայմանագրերը, նախադեպային իրավունքը և միջազգային սովորութային իրավունքը:

Օտարերկրյա ահաբեկիչ-վարձկաններին վերաբերող և առավել հաճախ մեջբերվող միջազգային գործիքը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2178 բանաձևն[24] է: 2014 թ. այս բանաձևով առաջին անգամ տրվեց օտարերկրյա ահաբեկիչ-վարձկաններ եզրույթի իրավական սահմանումը, որը ենթադրում էր ահաբեկչական և ռազմական գործողություններին մասնակցության կամ հանցագործություններ կատարելու նպատակով այլ պետության տարածք մեկնելը, ահաբեկչական գործողությունների պլանավորումը, նախապատ-րաստումը, մասնակցությունը և այլն: Սակայն բանաձևի մեջ բացակայում է մեկ շատ կարևոր եզրույթի՝ ահաբեկչության, կիրառությունը, հանցագործության սահմանումը և ահաբեկչական գործողությունների բնութագիրը, ինչպես դա արված է Անվտանգության խորհրդի մեկ այլ՝ 1566 բանաձևում[25]:

Օտարերկրյա վարձկանների և ահաբեկիչների ներգրավումը զինված հակամարտությունների ժամանակ բազմաթիվ հարցեր է առաջացրել ահաբեկչական գործողությունների քրեական

[24] Security Council resolution 2178 (2014), Adressing the growing issue of foreigh terrorist fighters, https://www.un.org/sc/ctc/wp-content/uploads/2015/06/SCR-2178_2014_EN.pdf

[25] Security Council resolution 1566 (2004) on Threats to international peace and security caused by terrorist acts, https://www.un.org/ruleoflaw/blog/document/security-council-resolution-1566-2004-on-threats-to-international-peace-and-security-caused-by-terrorist-acts/

հետապնդման հիմքերի վերաբերյալ: Շատ պետությունների (զինված հակամարտության մեջ ներգրավված) ներքին քրեական օրենքները հիմնվում են պետության կողմից վավերացված միջազգային փաստաթղթերի վրա: Միջազգային (նախ և առաջ միջպետական) զինված հակամարտություններում ահաբեկիչների ներգրավման պարագայում միջազգային մարդասիրական իրավունքը բավականաչափ ճկուն հիմքեր չի տալիս քրեական գործերի շրջանակներում համագործացության համար, իսկ ներքին զինված հակամարտությունների դեպքում նման մեխանզմներն իսպառ բացակայում են: Միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում առկա այս բացը կարող է լրացվել ՄԱԿ-ի կոնվենցիաների հետ համադրմամբ՝ չնայած դրանց մեծ մասն ուղղակիորեն չի վերաբերում զինված հակամարտությունների ընթացքում ահաբեկիչների ներգրավման խնդիրներին: Խոսքը նախ և առաջ վերաբերում է Գերիների մասին Ժնևյան կոնվենցիային[26], Ահաբեկիչների ֆինանսավորման դեմ պայքարի մասին[27] և Ահաբեկչական ռմբակոծությունների կանխման միջազգային կոնվենցիային[28], և այլն:

Այսպիսով, պետք չէ բացառել տարբեր իրավական կարգավորումների համաժամանակյա կիրառումը՝ հատկապես այն պարագայում, երբ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բազմաթիվ բանաձևերում զինված հակամարտությունների ժամանակ իրականացված գործողությունները որակվել են որպես ահաբեկչական: Ուստի չափազանց կարևոր է օտարերկրյա

[26] Convention relative to the Treatment of Prisoners of War. Geneva, 27 July 1929, https://ihl-databases.icrc.org/applic/ihl/ihl.nsf/52d68d14de6160e0c12563da005fdb1b/eb1571b00daec90ec125641e00402aa6?OpenDocument, (12.09.2021)

[27] International Convention for the Suppression of the Financing of Terrorism, https://treaties.un.org/doc/db/terrorism/english-18-11.pdf (12.09.2021)

[28] International Convention for the Prevention of Terrorist Bombings, https://www.unodc.org/documents/treaties/Special/1997%20International%20Convention%20for%20the%20Suppression%20of%20Terrorist.pdf , (12.09.2021)

ահաբեկիչ-վարձկանների՝ զինված հակամարտություններում ներգրավման և ռազմական գործողություններին մասնակցության իրավական հիմքերի հստակեցումն ու քրեական գործերում համագործակցության իրավական հիմքերի ամրապնդումը:

Վարձկան-ահաբեկիչների ներգրավումը Երկրորդ Արցախյան պատերազմում: 2020թ. սեպտեմբերի 27-ին մեկնարկած ադրբեջանական ագրեսիան ուներ մի շարք ակնհայտ առանձնահատկություններ. Թուրքիան ուղղակիորեն մասնակցում էր ռազմական գործողություններին, ինչի մասին բազմիցս բարձրաձայնել են նաև տարբեր պետությունների ներկայացուցիչ-ներ, այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների բարձրաստիճան պաշտոնյաները: Ռազմական գործողությունների ծավալմանը զուգահեռ շրջանառվեցին լուրեր, ըստ որոնց ադրբեջանական բանակի շարքերում կռվում էին նաև Միջին Արևելքից՝ մասնավորապես Սիրիայից այստեղ տեղափոխ-ված վարձկան-ահաբեկիչներ, ինչը շատ շուտով հաստատվեց նաև տարբեր պետությունների կողմից: Այդ մասին պաշտոնական հայտարարությամբ հանդես եկան Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնը, ՌԴ Արտաքին հետախուզության ծառայության ղեկավար Սերգեյ Նարիշկինը, ԱՄՆ Պետ-քարտուղարությունը և ուրիշներ: Նախահարձակ գործողություն-ներում ադրբեջանաթուրքական կողմը կիրառում էր ողջ զինանոցը՝ հրթիռակոծելով նաև խաղաղ բնակավայրերը, սրբավայրերը՝ կիրառելով արգելված զինա-տեսակներ՝ չթաքցնելով հայերին բնաջնջելու իրենց վաղեմի նկրտումները:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում իրավիճակի սրման արդյունքներից մեկն էլ ահաբեկչական գործոնի ակտիվացումն էր՝ ի դեմս միջազգային ահաբեկչական խմբավորումների ներգրավման, որոնց նպատակը ոչ միայն ֆինասական օգուտներ քաղելն էր, այլ նաև ահաբեկիչների ներթափանցումը տարածաշրջան: Նման հանցավոր տարրերի ներթափանցումը Հարավային Կովկաս շատ մեծ ռիսկեր էր պարունակում վերածվելու սիրիական, լիբիական կամ որը պակաս

հավանական էր, աֆղանական սցենարի։ Միջազգային ահաբեկչական խմբավորումները հիմնականում երեքն էին՝ Ջաբաթ-ան-Նուսրա (Al-Qaida ցանցի մաս կազմող) Ֆիրքատ ալ Համզա և Սուլթան Մուրադ[29]։ Հայաստանը մինչև սեպտեմբերի 27-ը չէր բախվել միջազգային ահաբեկչության սպառնալիքի հետ, ավելին, Ռուսաստանի հետ չեզոքացնում էր Իսլամական պետության ագրեսիայի հետևանքները Սիրիայում։ Ընդհանուր առմամբ, ահաբեկիչների ներգրավումը նպատակ ուներ անկայունություն հրահրել տարածաշրջանում և այն դարձնել միջազգային ահաբեկչության էպիկենտրոն։

Հայկական կողմը բազմիցս է բարձրաձայնել Թուրքիայի կողմից Մերձավոր Արևելքի տարբեր «թեժ կետերից», մասնավորապես՝ Սիրիայի՝ իր վերահսկողության տակ գտնվող շրջաններից և Լիբիայից Արցախի ժողովրդի դեմ վայրագություններ իրականացնելու նպատակով օտարերկրյա զինյալ ահաբեկիչների և ջիհադիստների հավաքագրման, տարածաշրջան տեղափոխման և տեղակայման մասին։ Վերոնշյալ փաստը ներկայումս ոչ միայն հաստատվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների հատուկ ծառայությունների, գործընկեր պետությունների և միջազգային հանրության կողմից, այլև արդեն հենց ահաբեկիչների ուղղակի վկայություններով։ Իրենց վկայություններում վերոնշյալ ահաբեկիչները մանրամասն տեղեկատվություն են փոխանցել իրենց հավաքագրման գործընթացի, «գյավուր» (անհավատների) դեմ պայքարի համար ակնկալվելիք ամսական վճարների և յուրաքանչյուր «անհավատի» գլուխ կտրելու համար «պարգևավճարների», ինչպես նաև իրենց կողմից իրականացվելիք ահաբեկչական ծրագրերի մասին։ Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտի ջիհադիստների տեղափոխումը

[29] A/75/644–S/2020/1191 General Assembly Security Council https://undocs.org/pdf?symbol=en/A/75/644, (12.09.2021)

բացահայտում է հակամարտությանը միջկրոնական բնույթ հաղորդելու թուրք-ադրբեջանական ղեկավարության նպատակը[30]:

Արցախյան հակամարտության գոտում Մերձավոր Արևելքից օտարերկրյա զինյալ ահաբեկիչների և ջիհադիստների տեղակայումը իրական սպառնալիք է միջազգային ու տարածաշրջանային անվտանգության և կայունության համար: Այս հույժ կարևոր հարցին անդրադարձ կատարվեց նաև տարբեր միջազգային կազմակերպությունների և իրավապաշտպան կազմակերպությունների կողմից:

Այսպես, 2020թ. նոյեմբերի 11-ին ՄԱԿ-ի Վարձկանների օգտագործման հարցով աշխատանքային խումբը «Լեռնային Ղարաբաղում հակամարտության գոտուց և հարակից տարածքից վարձկանները պետք է դուրս բերվեն» վերտառությամբ հայտարարություն[31]: Հայտարարությամբ ՄԱԿ-ի փորձագետները մտահոգություն էին հայտնում Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում վարձկանների ներգրավման փատի առնչությամբ և հորդորել անհապաղ հեռացնել նրանց: Նաև նշվում է, որ Ադրբեջանը, Թուրքիայի աջակցությամբ, Սիրիայից հակամարտության գոտի է տեղափոխում վարձկանների՝ ռազմական գործողություններում ներգրավելու նպատակով: Այդ անձանց հավաքագրման, տեղափոխության և օգտագործման ձևը լիովին համապատասխանում է վարձկանի սահմանմանը, որն ամրագրված է միջազգային իրավական մի շարք հիմնարար փաստաթղթերում, այդ թվում «Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և ուսուցման դեմ» միջազգային

---

[30] ՀՀ ԱԳ նախարարությունը Թուրքիայի և Ադրբեջանի կողմից տարածաշրջան օտարերկրյա զինյալ ահաբեկիչների տեղակայման վերաբերյալ, https://www.mfa.am/hy/press-releases/2020/11/01/fm-statement/10622, (12.09.2021)

[31] Mercenaries in and around the Nagorno-Karabakh conflict zone must be withdrawn – UN experts, https://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=26494&LangID=E&fbclid=IwAR01BkCz5tuUp06FMifXQSYqUU7VGezpmFiNuvxEFKrJltmoHUjc7D-ghU8 , (16.09.2021)

կոնվենցիայում[32]: Հայտարարության համաձայն Սիրիայից Թուրքիայի տարածքով Լեռնային Ղարաբաղ սիրիացի վարձկանները սերտ առնչություններ ունեն Սիրիայում իրականացված պատերազմական հանցագործություններին և մարդու իրավունքների լրջագույն խախտումներին: Աշխատանքային խումբը կոչ է արել վարձանների տեղակայմանը նպաստող պետություններին անհապաղ դուրս բերել վարձկաններին հակամարտության գոտուց:

ԵԱՀԿ շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում վարձկանների ներգրավման խնդիրը քննարկվել է մի քանի անգամ: Նախ սեպտեմբերի 30-ին ԼՂ հակամարտության գոտու շուրջ ստեղծված իրավիճակը քննարկվեց ԵԱՀԿ Մշտական խորհրդի հատուկ նիստում, որը նախաձեռնել էր Ալբանիան: Նիստի ժամանակ քննարկվել է հակամարտության հետ կապված հարցերի լայն շրջանակ, այդ թվում նաև Սիրիայից՝ Ադրբեջանում կռվելու նպատակով վարձկաններ վարձելու և Ադրբեջան տեղափոխելու հարցը: Նոյեմբերի 5-ին ևս Մշտական խորհրդի նիստի օրակարգում ներառվել է «Ադրբեջանի՝ Թուրքիայի և օտարերկրյա ահաբեկչական մարտիկների ներգրավմամբ ագրեսիան Արցախի և Հայաստանի դեմ» հարցը Հայաստանի պատվիրակության նախաձեռնությամբ: Արդեն նոյեմբերի 20-ին ԵԱՀԿ 1290-րդ լիագումար նիստի ժամանակ վարձկան ահաբեկիչների հարցը ներառվեց օրակարգ՝ հետևյալ ձևակերպմամբ «Ադրբեջանի ագրեսիան Արցախի և Հայաստանի դեմ Թուրքիայի և ահաբեկիչների ուղիղ ներգրավմամբ33»:

Ադրբեջանի և Թուրքիայի կողմից սիրիացի վարձկանների ներգրավման մասին հրապարակումներ եղան նաև արևմտյան մի

---

[32] International Convention Against the Recruitment, Use, Financing and Training of Mercenaries, https://treaties.un.org/doc/Treaties/1989/12/19891204%2008-54%20AM/Ch_XVIII_6p.pdf, (12.09.2021)

[33] 1290th Plenary Meeting of the Council, https://www.osce.org/files/f/documents/d/d/472074.pdf, (12.09.2021)

շարք հեղինակավոր պարբերականներում՝ The Guardian34, The New York Times[35] և այլն: Արցախյան Երկրորդ պատերազմի վերաբերյալ ծավալուն զեկույց է ներկայացրել նաև Միջազգային ճգնաժամային խումբը (International Crisis Group)՝ նշելով, որ Ադրբեջանը և Թուրքիան շարունակում են հերքել հակամարտության գոտում ահաբեկիչների ներգրաման փաստը[36]: Այս համատեքստում առաջնային, անհետաձգելի միջոցառումների իրականացումն օրակարգային խնդիր պետք է դառնա: Այդ հարցի շուրջ քննարկումները տարբեր միջազգային ատյաններում (ՄԱԿ, ԵԽ, ԵԱՀԿ, ԱՊՀ), միջազգային տարբեր մարմինների հետ պետք է իրականացվեն օպերատիվ կերպով, իսկ այդ նպատակի իրագործմանը պետք է լծվեն ոչ միայն պետական բոլոր կառույցները, այլ նաև Սփյուռքի լոբբիստական կազմակերպությունները: Խնդրի վերաբերյալ իրազեկումն ու պատշաճ արձագանքը թույլ կտան հասնել այն արձանագրմանը, որ վարձկան ահաբեկիչները կատարել են պատերազմական հանցագործություններ ու դաժանություններ:

Միջազգային իրավունքի շրջանակներում խնդրի բարձրաձայնման ու համապատասխան իրավական գործընթաց-ների մեկնարկի համար հիմք կարող են հանդիսանալ ՄԱԿ-ի կոնվենցիաները, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը՝ (նախ և առաջ 2178[37] և 1566[38]): Արցախի պարագայում առավել քան

[34] Syrian Recruit Describes Role of Foreign Fighters in Nagorno-Karabakh, https://www.theguardian.com/world/2020/oct/02/syrian-recruit-describes-role-of-foreign-fighters-in-nagorno-karabakh, (12.09.2021)

[35] Fighting Flares Between Azerbaijan and Armenia, https://www.nytimes.com/2020/09/27/world/europe/azerbaijan-armenia-conflict-nagorno-karabakh.html, (12.09.2021)

[36] Improving Prospects for Peace after the Nagorno-Karabakh War, https://www.crisisgroup.org/europe-central-asia/caucasus/nagorno-karabakh-conflict/b91-improving-prospects-peace-after-nagorno-karabakh-war, (12.09.2021)

[37] Security Council resolution 2178 (2014), Adressing the growing issue of foreigh terrorist fighters, https://www.un.org/sc/ctc/wp-content/uploads/2015/06/SCR-2178_2014_EN.pdf, (12.09.2021)

[38] Security Council resolution 1566 (2004) on Threats to international peace and security caused by terrorist acts,

արդյունավետ կլինի ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի «Վարձկանների օգտագործումը որպես մարդու իրավունքների ոտնահարման և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրականացմանը խոչընդոտող միջոց» բանաձևը[39]: Բանաձևը դադապարտում է վարձկանների հավաքագրման, ֆինանսավորման, ուսուցման և տարանցման ցանկացած գործողություն, որի նպատակը ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրականացմանը հակազդելն է, ցանկացած պետության իշխանությունը ապա-կայունացումը կամ տապալումը, պետության մասնատումը և այլն:

Միջազգային տարբեր կառույցների կողմից համապատասխան բանաձևերի ընդունումը և իրավական արձանագրումները հնարավորություն կտան կանխել ապագայում նման ուժերի ներգրավման հեռանկարները, ինչպես նաև ազդել Արցախի կարգավիճակի որոշման գործընթացի վրա:

Եզրակացություն

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ՝

1. Ժամանակակից պատերազմների «հիբրիդայնացումը» էապես ջնջել է պատերազմի և խաղաղության միջև սահմանը, իսկ «հիբրիդայնացման» հետևանքներից մեկն ահաբեկչական կամ դիվերսիոն-ահաբեկչական խմբավո-րումների ներգրավումն է ռազմական գործողություններում, ինչը լրջագույն սպառնալիք կարող է հանդիսանալ ոչ միայն պետական (կանոնավոր) զինված ուժերի, այլ նաև խաղաղ բնակչության համար:

---

https://www.un.org/ruleoflaw/blog/document/security-council-resolution-1566-2004-on-threats-to-international-peace-and-security-caused-by-terrorist-acts/, (12.09.2021)

[39] Use of mercenaries as a means of violating human rights and impeding the exercise of the right of peoples to self-determination : resolution / adopted by the General Assembly, https://digitallibrary.un.org/record/537858/usage?ln=en#record-files-collapse-header, (12.09.2021)

2. Արդի փուլում կոնվենցիոնալ (ավանդական) մարտավարությունները արդյունավետ չեն ոչ ավանդական (անհամաչափ) սպառնալիքների դեմ: Բացի այդ, ապակենտրոնացման փիլիսոփայության կիրառումն ահաբեկիչներին, վարձկաններին հնարավորություն է տալիս աշխատել բարձր տեմպով՝ անհամեմատելի առավելություն ձեռք բերելով կանոնավոր ստորաբաժանումների նկատմամբ: Նոր պայմաններին արագ հարմարվողականությունը, յուրաքանչյուր պահին նոր մարտավարության կիրառումը հնարավորություն է տալիս հանկարծակիի բերել հակառակորդին, քանզի գործում են տարաշարժային պատերազմի սկզբունքներով՝ հիմնական շեշտը դնելով շարժուն խմբերի գործունեության վրա:
3. Ահաբեկչական խմբավորումները հեշտությամբ կարող են ներթափանցել հակառակորդի ռազմավարական խորքը, իրականացնել պայթյուններ, վնասել հակառակորդի ենթակառուցվածները, հաղորդակցության ուղիները, ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտները: Սա իրագործելն առավել քան հեշտ է պետության՝ ռազմավարական խորքի բացակայության պայմաններում: Ահաբեկիչների գործողությունները նաև հոգեբանական ազդեցություն և հետևանքներ են ունենում հակառակորդի զինված ուժերի և բնակչության վրա: Նպատակը հակառակորդի բարոյալքումն է և դիմադրության դադարեցումը: Այսինքն, ռազմական գործողությունների ընթացքի ու ելքի վրա ազդում է ոչ այնքան ահաբեկիչների գործողությունները մարտադաշտում, որքան հոգեբանական ազդեցությունը, վախի սերմանումը հակառակորդի հասարակության շրջանում:
4. Տարբեր ազդեցիկ պետությունների կողմից ռազմական գործողություններում վարձկան-ահաբեկիչների ներգրավումը պայմանավորված է մի շարք պատճառներով՝ բավարար չափով ֆինանսական միջոցների առկայություն,

պետական զինված ուժերի վրա կատարվող ֆինանսական ծախսերը մի քանի անգամ գերազանցում են ոչ կանոնավոր խմբավորումների համար նախատեսված ծախսերը, նման խմբավորումները անվերահսկելի են և անհամաչափ/ցանցային գործողությունների միջոցով կարողանում են պայքարել կանոնավոր զինված ուժերի դեմ, բացի այդ, նման խմբավորումները տիրապետում են ժամանակակից սպառազինությանը և այլն:

5. Ժամանակակից աշխարհում թեև առկա է ահաբեկչության արձագանքման ու հակազդման գիտակցում մարտավարական մակարդակում, սակայն չկա դրան հակազդելու լիարժեք ընկալում ռազմավարական մակարդակում, հետևաբար բացակայում են նաև կանխման ու հակազդման գործուն մեխանիզմները: Ուստի, ժամանակակից պատերազմներում և զինված հակամարտություններում վարձկան-ահաբեկիչների ներգրավման և դրա վերաբերյալ ճիշտ վերաբերմունքի ու հակազդման մեխանիզմների ձևավորումն օրակարգային խնդիր է: Հակառակ դեպքում, նրանց դեմ պայքարի մեխանիզմները պատերազմում կարող են ոչ արդյունավետ, թանկարժեք և, իհարկե, ուշացած լինել:

The Activation of Terrorism in Modern Warfare and Armed Conflicts: Causes and Main Trends

MARGARIT PETROSYAN
Brusov State University

The revolutionary changes in science and technology have irreversibly changed the nature of modern warfare and armed conflict. The changing situation and conditions have inevitably and explicitly affected the forms, scales, and motives of war and warfare. One of the consequences of "hybridization", characteristic of modern warfare and armed conflicts, is the activation and involvement of terrorist or subversive terrorist groups in military operations using non-traditional, asymmetric means of combat. The article discusses the causes and main trends for the activation of terrorism in modern warfare and armed conflicts, considering the issue in the context of the involvement of mercenaries in the war unleashed in Artsakh as a result of the Azerbaijani-Turkish aggression.